Արձանագրություն N 2
Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծության աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

12.02.2018թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Մուրադյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Հովսեփյան /գնահատող/, Ա. Ավետիսյան /գնահատող/, Ա. Եփրեմյան /բացող/, Ա. Գալստյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Լ. Մուրադյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի փետրվարի 12-ին, ժամը 12:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին

(Լ. Մուրադյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Երևաննախագիծ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Լ. Մուրադյան)

3.1 Գնանշման հարցման մասնակիցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծության աշխատանքներ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային արժեքը	Առաջարկած գինը		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
«Երևաննախագիծ» ՓԲԸ	8000000	6600000	1320000	7920000

3.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկա թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Լ. Մուրադյան)

4.1 Մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Երևաննախագիծ» ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Լ. Մուրադյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/12» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն, որպես բավարար գնահատված գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Լ. Մուրադյան)

6.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 13.02.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 13.02.2018թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Գնանշման հարցման հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Լ. Մուրադյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Լ. Մուրադյան

Անդամներ՝ ---------- Մ. Հովսեփյան

---------- Ա. Ավետիսյան

---------- Ա. Եփրեմյան

---------- Ա. Գալստյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան